«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Ազգային տոների ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում»

Մեթոդիստ՝ Արմինե Հովհաննիսյան

Մանկապարտեզ՝ Գետափի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

2023թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրականության ակնարկ: **Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և նրանց անձնային հատկանիշների ձևավորման մեջ մեծ ազդեցություն ունեն ազգային տոների և ծեսերի կազմակերպման առանձնահատկությունների ճիշտ ներկայացումը, քանի որ այն թույլ է տալիս դաստիարակել հայրենասեր և կիրթ սաներ: Ազգային տոնն ու ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար:**

Նախակրթարանում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով: Լինելով մանկապարտեզի մեթոդիստ և աշխատելով մեծ թվով սաների հետ, պետք է փաստեմ, որ երեխաներին հետաքրքրում են մեր հայկական տոներն ու ծեսերը, դրանց ճիշտ մատուցումը մեծ ազդեցություն և նշանակություն ունի երեխաների դաստիարակչության մեջ, ուստի թեմայի վերաբերյալ գիտական նյութերի և հետազոտական աշխատանքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը խիստ կարևոր է և արդիական:

Հետազոտության նպատակը: **Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց ունեցած ճանաչողական և դաստիարակչական դերը մանկապարտեզի սաների կյանքում:**

Աշխատանքի կառուցվածքը: **Սույն հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 1 տեսական և 1 գործնական գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:**

ԳԼՈՒԽ 1. ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Հայ ազգը դարեր շարունակ իր ազգային տոները և ծեսերը նշելուն կարևոր տեղ և նշանակություն է տալիս, քանի որ նրանք համարվում են մեր հոգևոր գոյության հիմքերից: Ուստի կարևոր է նախադպրոցական տարիքից սկսած ճիշտ հիմք դնել երեխայի հոգևոր զարգացման համար:

Ազգային տոները և ծեսերը մանկան ընդհանուր զարգացման միջոցներից են համարվում: Ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը: Հայ մեծագույն մանկավարժներն ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով:

Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, խաղում իր տարիքին բնորոշ հմտությամբ: Զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը, ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, համադրելու, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու, ճիշտ կողմնորոշվելու, շարժումներին տիրապետելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը և

այլն:

Ազգային ծեսերի խաղարկման մեջ երեխան հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը, գործողությունների այն բաժինը, որն իրենն է: Իսկ մեծերն էլ պետք է իմանան, որ այդ ամենը հավասարապես հարկավոր է բոլորին, ըստ այդմ էլ՝ բոլորը հավասար մասնակից են՝ իրենց կարողությունների սահմաններում: Այս դեպքում երեխան, ինչպես նաև մեծը, կլինի ծեսն իմացող, կրող, փոխանցող: Շատ կարևոր է այս ամենը ներմուծել ընտանեկան միջավայր, որտեղ սիրելի, հարազատ մարդկանց հետ երեխան ավելի վստահ, համարձակ ու ազատ կգործի՝ ժառանգելով ամենակարևորը՝ ազգային մշակութային արժեքները:

Ամփոփելով, նշենք, հայեցի կրթություն ապահովելու համար կրթության բովանդակության մեջ պետք է ներածել ազգային ոգի՝ վերականգնելով և նորովի գնահատելով մեր ժողովրդի հանիրավի անտեսված արժեքները: Ծեսերն ու սովորույթներն էլ լինելով ազգային արժեքների անփոխարինելի մասերից մեկը, որոնք ևս պիտի պահպանել և դարձնել անմոռանալի, անփոխարինելի:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

2. 1. Պարապմունքի պլան

Հետազոտության իրականացման համար մշակվել է պարապմունքի պլան, ընտրվել է ինտեգրված ուսուցման մեթոդը: Ընտրված թեման է «Ազգային տոներ և ծեսեր»: Պարապմունքի պլանը համառոտ ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Պարապմունքի պլան

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Ինտեգրված պարապմունք-Խոսքի զարգացում, Երաժշտություն, Կերպարվեստ	Ավագ	«Ազգային տոներ և ծեսեր»	2 պարապմունք
Նպատակ	Շարունակել ձևավորել երեխաների մոտ ազգային տոների և ծեսերի վերաբերյալ ընդհանուր պատկերացում: Զարգացնել վերլուծական մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը: Զարգացնել գեղեցիկը, ազգայինը գնահատելու կարողունակությունները: Յուրաքանչյուր երեխայի մեջ սերմանել սեր հայրենիքի և ազգային մշակույթի նկատմամբ:		
Վերջնարդյունք	Սանը կիմանա, թե ինչ է ազգային ծեսը, ազգային սովորույթները, հայկական ժողովրդական և ծիսական երգերը, ծիսական կերպարները, ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը, ծիսական կերակրատեսակները, ծիսական պարագաները:		
Բառապաշարի հարստացում	Բարեկենդան, խնոցի, ծես, Ակլատիզ,բառերի ուսուցում:		

Թեմային վերաբերող նյութերի հավաքում	Տիկնիկի պատրաստման համար՝ սոխ, 7 փետուր, խաչուկ փայտեր, տարազային երիզակ-կտորներ, մանր քարեր
Մեթոդներ	Զույգերով, խմբերով:
Ընթացքը	
Խթանման փուլ	Երեխաները բաժանվել են խմբերի, ներս է մտնում անծանոթը, և հարցնում՝ -Երեխաներ, տեսե՞լ եք Բարեկենդանին, թե՝ ոչ: Երեխաները պատասխանում են, որ Բարեկենդանը մարդ չէ:
Իմաստի ընկալման փուլ	Թեմայի վերաբերյալ գիտելիքների ամրապնդում: Երեխաները վերապատմում են տոնի մասին ստացած գիտելիքները և պատրաստում են ծիսական տիկնիկ: Երգում են Բարեկենդանի երգ «Գնացեք տեսեք»:
Ֆիզկուլտ դադար	Խաղում ենք ազգային բակային խաղերից՝ Խնոցի-հարոցի: Խաղում են զույգերով:
Կշռադատման փուլ	Թեմայի ամփոփում, հարցերի միջոցով ամրապնդվում են գիտելիքները: Հարցեր- Ի՞նչ կերակուրներ էին պատրաստում Բարեկենդանին, Ո՞րն էր Բարեկենդանի ծիսական տիկնիկը և այլն:

2. 2. Հետազոտության ընթացք

Հետազոտական աշխատանքի շրջանակներում իմ կողմից իրականացվել է Գետափի «Արևիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի սաների հետ փորձարարական ուսումնասիրություն, որի նպատակն էր զարգացնել մանկապարտեզի ավագ խմբի սաների մեջ ազգային տոների և ծեսերի նկատմամբ հետաքրքրասիրություն, ինչպես նաև փոխանցել երեխաներին սեփական ազգային տոների և ծեսերի մասին գիտելիքներ:

Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում: Մանկապարտեզում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ: Խնդրի իրագործման համար սաները.

- սովորում են ծիսական և ծեսին համապատասխան երգեր, ասույթներ, ասիկներ, օրհնանքներ,
- նկարում են ծիսական հերոսներին, ինչպես նաև ծիսական պարագաներ,
- պատրաստում են ծիսական պարագաներ դաստիարակի օգնությամբ,
- խաղարկում են ծիսական գործողություններ, ծիսական խաղեր,
- բեմականացնում են երգեր,
- կատարում են բնագիտական փորձեր,
- հորինում են հանելուկներ, հեքիաթներ, գովք, օրհնանք,
- վերապատմում, փոխադրում են իրենց տպավորությունները:

Սանը, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով՝ յուրացնում է ծեսը:

Ի՞նչ խնդիրներ են լուծվում.

- նյութի յուրացում,
- կարողությունների դրսևորում,
- խոսքի զարգացում,

- տարբեր կարողությունների դրսևորում, հղկում, մի շարք հմտությունների ձեռքբերում, մշակում (լեզվական, թատերական),
- գրական-գեղարվեստական ճաշակի զարգացում,
- ինքնադրսևորում, ձերբազատում բարդույթներից:

Այս աշխատանքները նպաստում են.

- երեխայի բառապաշարի հարստացմանը,
- մտածողության ձևավորմանը,
- ստեղծագործական երևակայության զարգացմանը,
- ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,
- բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,
- ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- զարգանում է գեղարվեստական ճաշակը (նկարչություն, ձեռարվեստ, երաժշտություն և այլն),
- ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ սովորողները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Առաջին փուլ- Իմ կողմից առանձնացվում է թեմայի վերաբերյալ համապատասխան գրականություն, որը հետագայում պետք է փոխանցվի սաներին:

Երկրորդ փուլ-Նախադպրոցական դաստիարակության հայեցակարգի համաձայն, նախադպրոցականի ուսուցման կազմակերպման ամենաարդյունավետ, հետևաբար հիմնական ձևը դիդակտիկ խաղն է, որն աստիճանաբար փոխարինելու է ուսուցման կազմակերպման «դասային» ձևերը: Ուսուցման գործընթացը շարունակվում է նաև պարապմունքներից և դիդակտիկ խաղերից դուրս՝ ազատ ժամանցի, հանդեսների և տոնակատարությունների, զբոսանքի, խաղերի

ընթացքում:

Ուսուցման կազմակերպման ավանդական ձևերը պարբերաբար կատարելագործվում են, մշակվում են և մանկապարտեզ են մուտք գործում ուսուցման կազմակերպման նոր ձևեր: Դրանցից են՝ ինտելեկտուալ խաղերը, խաղ-բանավեճերը և խաղ-մրցույթները:

Ուսուցման գործընթացը նախադպրոցական տարիքում ուղղված է երեխայի անձի զարգացմանը, այն լրացնում է նախադպրոցականի դաստիարակության բարդ գործընթացին: Աշխատանքի ընթացքում կիրառվել են նաև՝

- Խաղային մեթոդ
- Գործնական ուսուցման մեթոդ
- Ակտիվ ուսուցման մեթոդ
- Ընդհանուր հարցուպատասխանի մեթոդ

Պարապմունքի ընթացքը՝ ԽԻԿ համակագով:

Խթանման փուլ- Երեխաները նախորոք բաժանվում են երեք խմբի, ներս է մտնում անցորդը և հարցնում՝ տեսել են բարեկենդանին, թե՝ ոչ, իսկ երեխաները պատասխանում են, որ բարեկենդանը մարդ չէ, տոն է:

Իմաստի ընկալման փուլ: Ես ասում եմ, որ երեխաներ, առաջին խումբը կարո՞ղ է պատմել, թե ի՞նչ է ծեսը: Առաջին խմբի երեխաները կարճ, համառոտ պատմում են Բարեկենդանի մասին: Անցորդն ասում է՝ իսկ եթե տոն է, ուրեմն ճոխ սեղաններ պետք է լինեն: Երկրորդ խմբի երեխաները միասին քննարկում են, այնուհետև մոտենալով սեղանին՝ ներկայացնում են Բարեկենդանին պատրաստվող ուտելիքները: Անցորդը պատասխանում է. -Շատ լավ է, բայց, եթե տոն է պետք է նաև զվարճանք, խաղեր լինի: Դաստիարակը դիմելով երրորդ խմբի երեխաներին ասում է. -Երեխաներ, եկեք անցորդին ցույց տանք, թե ի՞նչ խաղեր են խաղում Բարեկենդանի:

Ֆիզկուլտ դադար՝ Խնոցի-հարոցի: Խաղում են զույգերով:

Նստած կամ կանգնած դիրքով զույգերը դեմքով իրար են նայում: Մի

խաղացողի երկու ձեռքերի մատները հագցրած են դիմացինի մատներին՝ ափը ափին կպած:

-Խնոցի-հարոցի, կարագը՝ ձեզ, թանը՝ մեզ:

կամ՝

-Հարի-հարի խնոցի,

Մեջդ բարի, խնոցի,

Ունկդ բարակ, խնոցի,

Մեջդ կարագ, խնոցի:

Տեքստը ռիթմիկ արտասանելով, առաջին երեխան թեքվում է առաջ՝ ձեռքերը պարզելով առաջ, իսկ երկրորդ երեխան թեքվում է ետ՝ ձեռքերը մոտեցնելով կրծքին: Ապա երկրորդ երեխան թեքվում է առաջ՝ ձեռքերը պարզելով առաջ, իսկ առաջին երեխան ետ՝ ձեռքերը մոտեցնելով կրծքին:

Այնուհետև ես երեխաների և անցորդի հետ շրջանաձև նստած պատրաստում ենք Բուն Բարեկենդանի ծիսական տիկնիկ՝ Ակլատիզ, կիրառելով խոսք-գործողություն մեթոդը, ներկայացնում տիկնիկի խորհուրդը: Տիկնիկը իրենից ներկայացնում էր մի սոխ (կարտոֆիլ, խմորագունդ), վրան յոթ փետուր խրած: Դրանք խորհրդանշում էին պասի յոթ շաբաթները: Որոշ վայրերում փետուրները կարող էին գույնզգույն լինել կամ՝ չորսը սպիտակ, մեկը՝սև ու սպիտակ, երկուսը՝ սև, քանի որ պասի առաջին 4 շաբաթները ձմռան շրջանում են, վերջին երեքը՝ գարնան, երբ գետինն արդեն սևացել է: Շաբաթը լրանալուն պես մի փետուրը հանում էին: Սոխի վրա խրում էին միոտանի տիկնիկին՝ պատրաստված փայտից, բեղ-մորուքով, հագին՝ տղամարդու շորեր, աջ ու ձախ պարզած թևերից քարեր կախած: Ամբողջ ընթացքում նա հսկում է, որ ընտանիքում ոչ ոք չխախտի պասը: Հակառակ դեպքում պատիժը չէր ուշանա՝ նա քարերով կհարվածեր պասը խախտողին կամ էլ կծու բիբարով կվառեր նրա բերանը:

Վերջում երգում են Բարեկենդանի երգ՝ Գնացեք տեսեք:

Գնացեք տեսեք՝ ով է կերել թուփը,

Գնացին տեսան՝ այծն է կերել թուփը:

Այծն ու թուփը,

Թուփն ու այծը,

Ձեզ՝ բարեկենդան,

Մեզ՝ բարի զատիկ:

Ձեզ՝ բարեկենդան,

Մեզ՝ բարի զատիկ. . . .

Կշռադատման փուլ- Այս փուլում իմ նպատակն այն է, որ ստացած տեղեկատվությունը սաները կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքներին միաձուլել ունեցածը: Ամփոփելով իմ կողմից տալիս եմ հետևյալ հարցերը.

1. Ինչի՞ մասին էինք զրուցում:
2. Ի՞նչ կերակուրներ էին պատրաստում Բարեկենդանին:
3. Ո՞րն էր Բարեկենդանի ծիսական տիկնիկը:

Նշեմ, որ ամբողջ պարապմունքին հետևում էին մանկապարտեզի տնօրենը և դաստիարակները: Տնօրենը նշեց, որ մանկապարտեզում երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների ուսումնառությունը և զարգացումը բազմակողմանի է, քանի որ ֆիզիկական զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները, սոցիալական շփման և իմացական կարողությունները: Տնօրենի կարծիքով երեխաները բավականին ակտիվ մասնակցություն ունեին, ուստի ինձ հաջողվեց հասնել իմ կողմից սահմանված նպատակին և իմ կողմից ճիշտ էր կազմակերպվել ամբողջ պարապմունքը, քանի որ ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին

պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը, գործողությունների այն բաժինը, որն իրենն է:Ինձ հաջողվել է իրագործել իմ կողմից սահմանված նպատակները և երեխաների մոտ այնպիսի վերաբերմունք ձևավորել ազգային տոների և ծեսերի նկատմամբ, որ ազգային մշակույթի արժեքները չմոռացվեն: Այս դեպքում երեխան հանդիսանում է ծեսը պահպանողն և փոխանցողը դեպի տուն և շրջակա աշխարհ:

Գործնական աշխատանքը ցույց տվեց, որ նախադպրոցական տարիքի երեխան ծիսական բնական, անկաշկանդ, ազատ միջավայրում կիրառում է իր գիտելիքները, հմտություն է ձեռք բերում, զարգանում է երևակայությունը, կարողանում է ազատ արտահայտել իր միտքը: Կարողանում է կողմնորոշվել և կատարել համապատասխան գործողություններ՝ բանավոր խոսքի միջոցով հիմնավորելով, ներկայացնելով իր երևակայությամբ ստեղծած միտքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Սանը քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնել ծեսը: Կենդանի, ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողությունները՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

Ներկայացված նյութն առաջարկում ենք կիրառել մանկապարտեզներում, նախակրթարաններում, ընտանիքում, այլ մանկական հաստատություններում: Այն ոչ միայն երեխաների, այլև բոլորի համար ազգային մշակույթի յուրացման արդյունավետ նյութ է, ծրագրում ներառելով ազգային ծեսը՝ ծիսական երգերով, խաղերգերով, ծիսական միջավայրով, ճիշտ ուղղությամբ կուղղորդվի սանի ոչ միայն երաժշտական կրթությունը, այլև զարգացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Գրիգորյան Ն., Նախադպրոցական մանկավարժություն, դասախոսություններ, Գյումրի, 2015թ., 32 էջ:
- Ծառուկյան Ռ., Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Երևան, 2010թ., 125 էջ:
- Козлова О.А. Роль современных дидактических игр в развитии познавательных интересов и способностей младших школьников // Начальная школа. - 2004- №11- С. 49-55.